անհրաժեշտ ձեւականութիւններ եւ բաժանւում են խաղաղ, առանց աւելորդ կռիւների ու աղմուկի:

Ամեն մէկը նորից սարքում է իր կեանքը իր ուզածի պէս: Յաճախ է պատահում, որ նախկին մի զոյգ, փողոցում հանդիպելով, հանգիստ խօսքի են բռնւում եւ հարց ու փորձ են անում միմեանց իրանց նոր ընտանեկան կեանքից:

–Հը՞, մարդդ ի՞նչպէս է:

–Ոչինչ: Իսկ քո՞ կինդ:

–Հիանալի:

Ու գնում են նորից, ամեն մէկն էլ իր բանին:

Ճապոնում ամուսնութիւնը բնաւ կրօնական բնաւորութիւն չունի: Դա քաղաքացիական մի պարզ պայմանագիր է, որ կնքում ու խզում են երկու կողմերի փոխադարձ համաձայնութեամբ:

Նրանց ամուսնութիւնը անհատական էլ չէ. անձնական հակումն ու սիրահարութիւնը շատ քիչ դեր են խաղում: Հարսն ու փեսան յաճախ բոլորովին չեն էլ ճանաչում իրար: Ամուսնութիւնը Ճապոնում մի ընտանեկան պարտաւորութիւն է: Ընտանիքը ինքն է հոգում իր անդամների ամուսնութեան մասին, ցեղի յարատեւութիւնը ապահովելու համար:

Ճապոնում այդ հարցը մի առանձին նշանակութիւն է ստանում շնորհիւ նախնիքների պաշտամունքի, որ նրանց հաւատի հիմքն է կազմում:

Այդ պատճառով այնտեղ չամուսնացած կին ու տղամարդ չկայ: Բոլորը պէտք է ամուսնանան, եթէ չեն ուզում վրդովել իրանց նախնիքների հոգիները էն, միւս աշխարհում:

Ամուսնութեան ժամանակ մեծ դեր է խաղում միջնորդը, որ Ճապոնում մեծ յարգ ու պատիւ է վայելում, իբրեւ նոր